ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի պատականությունները կատարող Նարեկ Հովսեփյանի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1000000 ՀՀ դրամ տեղափոխել 04.5.1 ծրագիր 4511 հոդված՝ << Սիսիանի համայնքի տրանսպորտ>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի Վարդան Մանուրաչյանի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 800000 ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի հողերի գնահատման ծառայությունները ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի Վարդան Մանուրաչյանի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 300000 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի նոր մասնաշենքի գրունտի երկրաբանական հետազոտության ծառայությունները ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի պատականությունները կատարող Նարեկ Հովսեփյանի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 01.1.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 1650000 ՀՀ դրամ տեղափոխել 04.2.4 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Աղիտու բնակավայրերի ոռոգման ջրագծի ներքին ցանցի և ջրաղբյուրի նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի պատականությունները կատարող Նարեկ Հովսեփյանի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Խաչատրյանի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Նարա Հովհաննիսյանի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Հրանտ Արշակյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պատականությունները կատարող Նունե Օրդուխանյանի 2025 թվականի նոյեմբերի 5-ի զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 360000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5122 հոդված՝ Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի վերոնշյալ բաժինների համար բջջային հեռախոսներ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2025 թվականի նոյեմբերի 4-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 01.1.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 2677800 ՀՀ դրամ տեղափոխել 05.1.1 ծրագիր 5129 հոդված՝ Սիսիանի համայնքի կարիքների համար մինի ամբարձիչ տրակտորի և գործիքների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Մարգարյանի 2025 թվականի նոյեմբերի 4-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 9100000 ՀՀ դրամ տեղափոխել 05.1.1 ծրագիր 4511 հոդված՝ <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի պատականությունները կատարող Նարեկ Հովսեփյանի 2025 թվականի նոյեմբերի 5-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 5000000 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի Խանջյան փողոցի հարակից տարածքում, Գայի թաղամասում և Բռնակոթ բնակավայրում նախատեսվում է կառուցել տիպային նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Վերոնշյալ գումարը նախատեսվում է թվարկված տարածքների երկրաբանական հետազոտության ծառայությունները ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. Սիսիան համայնքի Գայի 1,2,4,6,7,10,12,13,14,15, Շահումյան 72,74, Զորավար Անդրանիկի 1,3,5 շենքերի հարակից փողոցների Զորավար Անդրանիկի և Որոտնեցու փողոցի վերջնամասի կապիտալ վերանորոգման աշխատանքների, Դուրյան 2, Սիսական 9, 11, 13, 15, 19, Ադոնց 3, Իսրայելյան 39, Արամ Մանուկյան 3, 2, 2Ա, Նժդեհի 4, Սիսական 46Ա, 50, Սիսական 50Ա, Ադամյան 11 բակային հատվածների և Շահումյան փողոցի սկզբնամասի ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների, Սիսիան համայնքի Ույծ բնակավայր տանող ճանապարհի վերանորոգման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 04.5.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 381.655.495 ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

05.11.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ